ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 80
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքը (Արևադաշտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Բաղրամյան համայնքի (Արևադաշտ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝
2. *ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքը (Արևադաշտ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիրի-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի (Արևադաշտ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-025-0230-0012 կադաստրային ծածկագրով 1.0732 հա մակերեսով հողամասից 0.04 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող	04-025-0230-0012 կադաստրային ծածկագրով 1.0732 հա մակերեսով հողամասից 0.04 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

3. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

4. Անհրաժեշտ է հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից նշված պահանջը՝ հետագայում իրավունքի պետական գրանցում իրականացնելիս ներկայացնելով ավել օգտագործվող տարածքի վերաբերյալ իրավահաստատող փաստաթղթեր:

5. Բաղրամյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել համայնքի (Արևադաշտ բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի (Արևադաշտ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «29» «մարտի» 2023 թ.